

«ՄԵՆՔ ԿԻՍՈՒՄ ԵՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ». ՓԱՐԻԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

24.04.2015 13:37



Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի, ինչպես նաև փաստաբանական գործունեության հիմնահարցերին նվիրված միջոցառումների կապակցությամբ Հայաստան են ժամանել Ֆրանսիայի, Ռուսաստանի, Հունաստանի, Բուլղարիայի փաստաբանական համայնքների ներկայացուցիչներ և իրենց երկրներում Ցեղասպանության ճանաչման ուղղությամբ գործունեություն ծավալած հայտնի փաստաբաններ: Փաստաբանները մեկ րոպե լուռությամբ հարգել են 1915թ. անմեղ զոհերի հիշատակը: Ողջունելով հյուրերին՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը կարևորել է գործընկեր երկրներից ժամանած փաստաբանների ու փաստաբանական միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների այցը Հայաստան: . **‘Այսօր մենք մեր գործընկերներին հրավիրել ենք Հայաստան քննարկելու Ցեղասպանության իրավական հետևանքները: Մենք փորձում ենք նաև այս միջոցով օտարերկրյա փաստաբաններին ներկայացնել մեր խնդիրները, փորձել նրանց միջոցով հասնել Ցեղասպանության միջազգային և վերջնական ճանաչմանը:’** Փարիզի փաստաբանների միության նախագահ Պիեռ Օլիվիե Սյուլոը խոսեց Հայաստան իր այցի և Ցեղասպանության խնդրով իր մտահոգության մասին: ‘Ես շատ հպարտ եմ և ուրախ եմ, որ այսօր Երևանում եմ և սույնով իմ հարգանքի տուրքն եմ մատուցում Ցեղասպանության զոհերի հիշատակին և ուզում եմ հատուկ շեշտել, որ այս մասնակցությունը նշան է այն բանի, որ մենք կիսում ենք ընդհանուր արժեքները՝ կապված մարդու իրավունքների հետ և այդ տեսանկյունից շատ հպարտ եմ և ուրախ:’ Հայոց ցեղասպանության իրավական հարթակում միջազգային ճանաչման խնդրի համար Պիեռ Օլիվիեն ասել է. **‘Կարծում եմ, որ իրավական գնահատականը այս հարցի շուրջ շատ կարևոր է և կարևոր է, որ հարցի բարձրացումը և ներկայացումը հենց իրավական կողմով լինի, ուստի և այս դաշտում է և շատ կարևոր է կապը նաև պատմության հետ:’** Հարցին, թե ճանաչելով այս ցեղասպանությունը, հնարավո՞ր է կանխարգելել այլ ցեղասպանություններ պարոն Օլիվիեն հաստատել է՝ ասելով, որ ‘Միանշանակ համոզված եմ, որ դա այդպես էլ կլինի և մենք այսօր ներկայացնում ենք մի սերունդ, որը ցեղասպանություն տեսած և պատերազմներին հաջորդող սերունդի ներակայացուցիչ ենք և այդ տեսանկյունից

համոզված եմ, որ դա այդպես էլ կլինի:՝
Միջոցառման ընթացքում Ցեղասպանության
պատմաիրավական հիմքերի մասին խոսել է ՀՀ
փաստաբանների պալատի նախագահի
խորհրդական Զինավոր Մեղրյանը. «Ճանաչման
իրավապատմական հետևանքները. Հայոց
Ցեղասպանությունը 100 տարի անց» գեկույցով: Բացի
բարոյական պահանջատիրությունից ներկայացվել է
նաև խնդրի իրավական կողմը: «Հայոց
ցեղասպանության միջազգային ճանաչման ու
դատապարտման համար անհրաժեշտ իրավական
փաթեթերը մշտապես եղել է Հայաստանի
համապատասխան պետական
գերատեսչությունների, փորձագետների և
միջազգային իրավունքի մասնագետների
ուշադրության կենտրոնում՝:

Նախաձեռնությունը է տարվում ոչ միայն
դատապարտման, այլև նման ոճիրների
կանխարգելման համար: Մարդկության դեմ գործած
հանցագործությունները վաղեմության ժամկետ
չունեն: Սակայն այս տարելիցը նոր հանգրվան է,
որից այն կողմ Հայաստանը իր ուսերին ավելի մեծ
պատասխանատվություն է վերցնում: Այսպես կոչված՝
բարոյական իրավունք՝ պայքարելու համայն
մարդկության ավելի լավ ու անվտանգ ապագայի
համար: Մենք նախաձեռնում ենք սպանությունների
դեմ պայքարի միջազգային նոր շարժում: Այն
հիմնված է լինելու արդեն իսկ գործած հանցանքների
ճանաչման ու դատապարտման վրա և ուղղված՝
ապագայում ցեղասպանությունները
կանխարգելելուն: Դատապարտում և
կանխարգելում: Ահա այն առաքելությունը, որ
Հայաստանը վերցնում է իր վրա, և որին պատրաստ
են աջակցել աշխարհի շատ երկրներ ու ազդեցիկ
կառույցներ:

Փաստաբան Տարոն Սիմոնյանն էլ խոսել է Հայոց
Ցեղասպանության միջազգային իրավական
պատասխանատվության հիմքերի ու մեխանիզմների
մասին և մասնավորապես նշել տարբեր երկրների
հետ համագործակցելու, միջոցներ ձեռնարկելու և
իրավական նորմեր ընդունելու խնդիրները:
Օրինակներ են բերվել բազմակողմ միջազգային
պայմանագրերից, իրավական պրակտիայից ինչպես
նաև նշվեց պատմական իրադարձությունների
արդյունքում ընդունված տարբեր փաստաթղթերի
մասին: ՝1915 թ.-ի մայիսի 24-ին Մեծ Բրիտանիայի,
Ռուսաստանի և Ֆրանսիայի ղեկավարները գրավոր
ձևով դիմել են Օսմանյան կայսրության
ղեկավարությանը՝ պահաջելով վերջ դնել
մարդկության դեմ ուղղված հանցագործությանը:
Առաջին անգամ այս արտահայտությունն այդ
փաստաթղթում է ամրագրվել՝:

Հյուրերը շրջայց են կատարել Փաստաբանների պալատի շենքում ծանոթացել Փաստաբանական դպրոցի հնարավորություններին և Հանրային շահերի պաշտպանի գրասենյակի գործունեությանը:





Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })